Արձանագրություն N 03

«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱ-ԱՊՁԲ-01/24» ծածկագրով ԷԱ գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի

19 հունվարի, 2024թ, ժ 16:00,
«Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ»
ՀԿՀ, Շիրակի մարզ,
ք. Գյումրի, Վարդանանց հր. 1

Հանձնաժողովի նախագահ՝

1) Մենուա Մկրտչյան – համայնքի ղեկավարի օգնական,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Արամ Շաբոյան - համայնքի ղեկավարի օգնական

3) Լևոն Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի պաշտոնակատար,

4) Խաչատուր Սուլթանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ

4) Մանե Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ.

1. «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱ-ԱՊՁԲ-01/24» ծածկագրով ԷԱ ընթացակարգի միջոցով մրցույթի առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին 05.01.2024թ. էլեկտրոնային եղանակով տեղադրվել է www.gnumner.am հասցեում:

1.2 «Գյումրու համայանքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ -ի կարիքների համար սեղմված բնական գազի ձեռքբերման համար «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱ-ԱՊՁԲ-01/24» ծածկագրով ԷԱ ընթացակարգի համաձայն գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Մասնակցի		
N	**Անվանումը**	**Հասցեն**
1	ԳԱԶ-ԿՈՄՊՐԵՍՈՐ ԳՐՈՒՊ ՍՊԸ	ք.Գյումրի, Սևյան 1Ա,
2	Ա/Ձ ՌՈՒՍՏԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ	Ք. Գյումրի, Շիրակացի 17/2
3	Էլիտ Արման Շին ՍՊԸ	ք.Գյումրի Խանջյան 9
4	ԷՔՍՊՐԵՍ ԳԱԶ ՍՊԸ	Արագածոտնի մարզ, հ.Աշտարակ, Մուղնի 6 թղմս, տ.142
5	ՌԿ ՍՊԸ	Ք. Գյումրի, Երևանյան խճ 183/1

1.4 Տվյալներ հայտերի ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին

- Գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացրած հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

1.5 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ և հրավերով պահանջվող փաստաթղթերը: Փաթեթում ներկայացված փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4 դեմ – 0

1.6. Մասնակիցների առաջարկած գները

ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքի անվանում	ԳԱԶ-ԿՈՄՊՐԵՍՈՐ ԳՐՈՒՊ ՍՊԸ		Ա/Ձ ՌՈՒՍՏԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ		Էլիտ Արման Շին ՍՊԸ		ԷՔՍՊՐԵՍ ԳԱԶ ՍՊԸ		ՌԿ ՍՊԸ	
		առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ-ն	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ-ն	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ-ն	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ-ն	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ-ն
1.	Սեղմված բնական գազ	6200000	7440000	6999875	8399850	7000000	8400000	7000000	8400000	7250000	8700000

Հ/Հ	Ապրանքի անվանում	Նախահաշվային գին
		ներառյալ ԱԱՀ-ն
1.	Սեղմված բնական գազ	8 400 000

Հանձնաժողովը արձանագրեց՝

- Էլեկտրոնային աճուրդի արդյունքում ԳԱԶ-ԿՈՄՊՐԵՍՈՐ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը Պատվիրատուի մոտ առկա նախահաշվային գնի սահմանում է և նվազագույնն է:
- Հրավերի տեխնիկական բնութագրի համաձայն սեղմված բնական գազի լցակայանը գտնվելու է Գյումրի համայնքի վարչական տարածքում, ԳԱԶ-ԿՈՄՊՐԵՍՈՐ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի ներկայացրած հայտում ապրանքի նկարագիրը բաժնում նշված էր լցակայանը գտնվում է Գյումրի համայնքում, իսկ առանձին կցված N015/2023 լիազորագրում նշված է, որ լցակայանները գտնվում են Ախուրյան համայնքի Գյումրի խճուղի թիվ 66 և 66/4 հասցեներում: Անհրաժեշտ էր պարզաբանել և տեխնիկական բնութագրում հստակ նշել լցակայանի գտնվելու վայրը՝ Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին ուղարկել իրավաբանական անձի պետական ռեգիստրի վկայականը:
- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-ն որոշման 41-րդ կետի համաձայն անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:
- ԳԱԶ-ԿՈՄՊՐԵՍՈՐ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն մեկ աշխատանքային օրվա ընթացքում հայտում կատարեց շտկում և լցակայանի գտնվելու վայրը նշեց Ախուրյան համայնք, Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին ուղարկված իրավաբանական անձի պետական ռեգիստրի վկայականում ևս նշված է Ախուրյան համայնք: Մասնակցի հայտի շտկման արդյունքում տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին, հետևաբար գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հանձնաժողովը որոշեց՝

- Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի մերժման դեպքում էլեկտրոնային աճուրդը ինքնաշխատ եղանակով հայտարարվում է չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Մ. Մկրտչյան

Անդամներ՝ ---------- Լ. Բարսեղյան

---------- Խ. Սուլթանյան

---------- Մ. Վարդանյան

Քարտուղար՝ ---------- Ա. Սարգսյան